

14438



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«26» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 299 - 24

Նախաձեռնող՝

«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 35/33

Գործունեությունը՝

Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում
նախատեսվող կրթահամալիրի կառուցում

Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 299 - 24

«26» 12 2024թ.

Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Գարգառ բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվում է կառուցել ժամանակակից լուծումներով միջնակարգ դպրոց 200 աշակերտի համար և մանկապարտեզ՝ 80 երեխայի համար՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում, բնակավայրի դպրոցից մոտ 100 մ հեռավորության վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, (քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով):

Նկարագրական մաս. Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել 2024 թվականի օգոստոսի 2-ին Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կողմից տրված (N 38/24) նախագծման թույլտվությունը:

Նախատեսվում է կառուցել երկհարկանի դպրոց, որը կունենա բաց մարզադաշտ և մարզահրապարակ, պոմպակայան: Կառուցվելու է նաև 2 հարկանի մանկապարտեզ:



Նախատեսվող գործունեության տարածքը նախկին դպրոցի տարածքն է: Տարածքը պարսպապատված է, մասնակի կառուցապատված: Հարակից տարածքում գտնվում է մանկապարտեզի շենքը, որո ըստ տեխնիկական առաջադրանքի քանդվելու է՝ բարեկարգման նպատակներով:

Նախատեսվող գործունեության հողամասի մակերեսը կազմում է 0,77138 հա, կառուցապատման մակերեսը՝ 2110,00 մ², կանաչապատման մակերեսը՝ 2358,00 մ², բարեկարգման մակերեսը՝ 5828,00 մ², առկա շինությունների քանդման մակերեսը՝ 222,00 մ² ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 502 մ²: Նախատեսվում է նկուղային հարկ, 440.64 մ² ընդհանուր մակերեսով, 21.6x20.4 մ չափսերով: Բոլոր հարկերը հազեցած են լինելու հաշմանդամների համար նախատեսված աստիճանային ամբարձիչով:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճների մուտքերի մոտ նախատեսված են թեքահաթակներ: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հոգու համար, մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերն են՝ 24.7x18.0 մ: Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, սենյակներ և բուֆետ: Երկրորդ հարկում դասասենյակներ, սենյակներ և ուսուցչանոց: Նկուղային հարկն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես թաքսոոց: Հարկում նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպակայան:

Կրթահամալիրի գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ՝ դպրոցական բացօթյա միջոցառումների համար: Մանկապարտեզը միջանցքով կապված կլինի դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղակայված կլինեն հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, երկրորդ հարկում նաև հանդիսությունների սրահ, վարիչի և բժշկի սենյակներ:

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր շինությունները տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում: Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով:

Դպրոցն ապահովված կլինի օդափոխության ներածման և արտածման համակարգերով, որոնց ճյուղավորումների վրա կտեղադրվեն ջերմակարգավորիչ, ջերմապոլիպրոպիլենային փականներ և եռաբաշխիչներ:

Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից:

Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով, ինչպես նաև ջրային երկխողովականի ջրի մեխանիկական շրջանառությամբ այլումինե ռադիատորներով, բացառությամբ սպորտսրահի՝ որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով և մատակարարվելու է լիցենզավորված կազմակերպությունների կամ անձանց կողմից՝ պայմանագրի համաձայն: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ:



Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռանալու է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին է միանալու կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ :

Նախատեսվում է կառուցել մաքրման կայան, որից դուրս եկող մաքրված ջուրը ստորգետնյա խողովակներով կմիանա 100մ հեռավորության վրա գտնվող ոռոգման առվին:

Հողային աշխատանքների ժամանակ առաջանալու է 11551.4մ³ ծավալով հողային հանույթ, որից 252.8մ³ ծավալով հանույթն օգտագործվելու է հետլիցքի նպատակով, իսկ հողաբուսաշերտի ծավալը կազմելու է 1581.4մ³: Բուսաշերտի պահպանումը կատարվելու է 1404 ն որոշման համաձայն և հետագայում օգտագործվելու է բարեկարգման աշխատանքների ընթացքում, ավելացված հողային հանույթը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և մեխանիզմներով՝ մի քանի փուլերով: Քանդման արդյունքում առաջանալու 120 մ³ ծավալով շինադր, որը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված վայր, ինչպես նաև առաջանալու է շինարարության ընթացքում առաջացած շինադր՝ 70 մ³ ծավալով: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները հանձնվելու են բնակչության անպահով խավերին, իսկ մնացածը տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր: Կենցաղային աղբը կառուցապատման փուլում սպասվում է, որ կկազմի 9468կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու է 2 աղբարկղ:

Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվելու է Գյուլագարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով:

Գարգառի դպրոցի հարավային տարածքի գոունտային մակերեսին նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրական էներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով՝ 175 կՎտ պիկային հզորությամբ, ինչը կազմված է 318 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից:

Ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակներ, եզրաքարերի տեղադրմամբ:

Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 1,80մ բարձրությամբ ճաղաշարով: Ֆուտբոլի դաշտի ցանկապատը կլինի 4.2 մ բարձրության:

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլղոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության, տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Տարածքին ամենամոտը՝ «Գյուլագարակի» պետական արգելավայրն է, որը ուսումնասիրվող տարածքից գտնվում է շուրջ 3 կմ հեռավորության վրա: Տարածքում բնության և պատմության հուշարձաններ չկան:



Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- կառուցապատման ենթակա տարածքը նախատեսվում է ցանկապատել,
- շինությունների ծածկվելու են համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- փոշենստեցման նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում,
- իրականացվելու է կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով,
- հոսքաջրերը վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 0,84մ³ չափերի պարզարան, որտեղ ջուրը մեխանիկական նստեցումից հետո կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- հեղուկ նյութերը՝ տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- բոլոր մեքենաները պետք է ապահովված կլինեն համապատասխան խլացուցիչներով:
- անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքինության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- իրականացվելու է մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների ակնադիտական ստուգումներ շինհրապարակ ստուգայցերի միջոցով, իսկ բողոքների առկայության դեպքում փոշու, աղմուկի, թրթռման մակարդակների գործիքային չափումներ և վերլուծություն,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին,
- շին աղբի և թափոնների տեղադրման վայրի համապատասխանության ստուգում,



-աղմուկի և թրթռման մակարդակի գործիքային ստուգումներ բողոքների առկայության դեպքում:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Գյուլագարակի համայնքապետարանը, որոնց կողմից ստացված կարծիքները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ «Օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գյուլագարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
7. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, «Օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:



9. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

10. Գործունեության իրականացման տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում նախատեսել վայրի բույսերի աճելավայրերի մշտադիտարկման աշխատանքներ և տեսակին բնորոշ առանձնյակների հայտնաբերման դեպքում իրականացնել առանձնացման, տեղափոխման, պահպանության և պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

11. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Շին-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Շերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան